EHEAROME2020

Հռոմ Նախարարական հաղորդում

ՀԱՎԵԼՎԱԾ III

EUROPEAN Higher Education Area

bologna process

ITALIAN BFUG SECRETARIAT 2018-2020

Edited within the Erasmus+ project "IN-GLOBAL Enhancing Knowledge of the EHEA and Global Dialogue" in 2023.

The original version of the Rome Communiqué and its annexes are available on the website of the European Higher Education Area:
https://ehea.info/page-ministerial-conference-rome-2020

Funded by the European Union. Views and opinions expressed are however those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union or the European Education and Culture Executive Agency (EACEA). Neither the European Union nor EACEA can be held responsible for them.

Առաջարկություններ Ազգային Իշխանություններին՝ Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքում (ԵԲԿՏ) Բարձրագույն Կրթության Ոլորտում Ուսումնառությունը Եւ Դասավանդումը Բարելավելու Վերաբերյալ

Պատրաստված է Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի «Ուսումնառություն եւ դասավանդում» 2-րդ խորհրդատվական խմբի կողմից

2018 թվականի Փարիզի նախարարական հաղորդման մեջ նախարարները հայտարարել են «նորարարական ուսումնառության եւ դասավանդման գործելակերպերի՝ որպես ԵԲԿՏ-ի եւս մեկ տարբերակիչ հատկանիշի շուրջ համագործակցությունը» ընդլայնելու մասին:

Այդ նպատակով նախարարներին եւ ազգային իշխանություններին ներկայացվում են եվրոպական բարձրագույն կրթության համակարգերի շրջանակում եւ դրանց միջեւ համագործակցությունն ու գործընկերությունն ընդլայնելու համար գործողությունների վերաբերյալ սույն առաջարկությունները:

Առաջարկությունների շրջանակներում լիարժեք հարգվում են ԵԲԿՏ-ի այն հիմնարար արժեքները, որոնք վերջերս արտահայտվել են 2018 թվականի մայիսի 24-25-ի Փարիզի հաղորդման մեջ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Ակադեմիական ազատությունն ու ազնվությունը, ինստիտուցիոնալ ինքնավարությունը, սովորողների եւ անձնակազմի մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարմանը եւ բարձրագույն կրթության համար հանրային պատասխանատվությունը եւ վերջինիս հանրային պատասխանատվությունը ձեւավորում են ԵԲԿՏ-ի ողնաշարը»:

Քովիդ-19-ով պայմանավորված՝ առողջապահական ոլորտի եզհաժամի համատեքստն ավելի է ընդգծում Խմբի առաջարկությունների կարեւորությունը մի քանի առումներով: Հատկապես կարեւոր են մանկավարժական նորարարության անհրաժեշտության եւ առցանց կրթության եւ բաց կրթական ռեսուրսների հետագա զարգացման վերաբերյալ առաջարկությունները, ինչպես նաեւ կրթական հետազոտությունների եւ դասավանդման միջեւ կապի ամրապնդման վերաբերյալ առաջարկությունները:

Ստորեւ ամփոփված առաջարկությունները կառուցված են ուսանողակենտրոն ուսումնառության անհրաժեշտության, դասավանդման բարելավման եւ բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ ազգային եւ միջազգային երկխոսության համապարփակ կարեւորության շուրջ: Այս երեք թեմաները փոխկապակցված եւ հավասարապես կարեւոր են:

Առաջարկություններով նաեւ ընդգծվում են Բոլոնիայի գործընթացի գործիքների, հատկապես՝ Կրեդիտների կուտակման եւ փոխանցման եվրոպական համակարգի (ԿԿՓԵՇ) ամրապնդման խիստ կարեւոր նշանակությունը՝ ձեռք բերված ուսումնառության արդյունքները եւ դրանց հետ կապված ծանրաբեռնվածությունը, ինչպես նաեւ Բոլոնիայի գործընթացի մյուս առանցքային հանձնառությունները նշելու համար: Բարձրագույն կրթության համար պատասխանատու պետական մարմինները պարտավոր են՝

1. ուսանողակենտրոն ուսումնառությունն իրականություն դարձնել հետեւյալի միջոցով.

   - աջակցել բարձրագույն ուսումնական հաստատություններին նորարարության եւ ուսումնառության ու դասավանդման բարելավման վերաբերյալ կառուցվածքային երկխոսություն սկսելուն կամ իրականացնելուն ուղղված իրենց ջանքերում՝ ներգրավելով ուսանողների, ուսուցիչների, ինչպես նաեւ համապատասխան արտաքին շահագրգիռ կողմերի: Խնդիրները, որոնց անդրադարձ է արվում, պետք է ներառեն ուսումնական պլանի մշակումը, ուսումնառության արդյունքները, գնահատումը եւ որակի ապահովումը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով հասարակության ներկա եւ ապագա մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ հմտությունները.
   - կարգապահական դասընթացների շրջանակներում խթանել «փափուկ հմտությունների» եւ 21-րդ դարի կրթված քաղաքացու համար անհրաժեշտ հմտությունների զարգացումը՝ բարդ աշխարհի մարտահրավերները հասկանալու եւ այլոց եւ շրջակա միջավայրը հարգելու համար.
   - ուսումնասիրել որակյալ ուսումնառության եւ դասավանդման խթանմանն աջակցելու համար լավագույն գործելակերպերի միջսահմանային փոխանակումը խթանելու ուղիները՝ շեշտը դնելով ակտիվ մեթոդների վրա.
   - ստեղծել աջակցող միջավայր ինչպես ֆինանսավորման, այնպես էլ կանոնակարգման առումով, որը բարձրագույն ուսումնական հաստատություններին հնարավորություն է ընձեռում համապատասխանեցնել կրթության ապահովումը տարբեր տեսակի սովորողների (ցկյանս սովորողներ, ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ սովորողներ, ցածր ներկայացվածություն ունեցող եւ անապահով խմբերից սովորողներ) կարիքներին եւ կառուցել հավասարության ու ներառականության մշակույթ: Այն ընդգրկում

է ինստիտուցիոնալ եւ ազգային մակարդակներում եւ ամբողջ ԵԲԿՏ-ում ուսումնառության նկուն ուղիների (այդ թվում՝ միկրո հավատարմագրերի) ստեղծումը, ինչպես նաեւ դա անելու համար թվային տեխնոլոգիաների կողմից առաջարկվող հնարավորությունների ուսումնասիրությունը.

խրախուսել եւ աջակցել ազգային եւ ինստիտուցիոնալ ռազմավարությունների եւ մոտեցումների մշակմանը եւ իրականացմանը, ինչպես նաեւ Բաց կրթության մոտեցումներին եւ Բաց կրթական ռեսուրսների օգտագործմանը.

խթանել ուսանողների՝ համալսարանների միջեւ նախապես սահմանված պայմանավորվածություններից դուրս շարժունակ լինելը:

2. Խթանել դասավանդման շարունակական բարելավումը հետեւյալի միջոցով.

նպաստել կրթական թիմերի ստեղծմանը, որոնք հերառում են ինչպես գիտնականներ, այնպես էլ անձնակազմ, որը պատասխանատու է նրանց առաքելության իրականացման հարցում վերջիններիս օգնելու կամ վերապատրաստելու համար (ինստիտուցիոնալ եւ (կամ) միջինստիտուցիոնալ խմբեր).

աջակցել բարձրագույն ուսումնական հաստատություններին ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) եւ լավագույն գործելակերպերի (միջսահմանային) փոխանակման հարցում: Միջինստիտուցիոնալ անձնակազմի զարգացմանն ուղղված միջոցառումները եւ համագործակցային ազգային կառույցների ստեղծումը կարող են դիտարկվել որպես ՇՄԶ-ն ընդլայնելու ուղիներ.

աջակցել բարձրագույն ուսումնական հաստատություններին ինստիտուցիոնալ եւ ազգային մակարդակներում կայուն եւ օժանդակող միջավայր ստեղծելու հարցում՝ որակյալ դասավանդման եւ ուսումնառության վերափոխման, հատկապես՝ թվային վերափոխման համար: Այդպիսի միջավայրը պետք է ստեղծվի դասավանդման համար պատասխանատու անձնակազմի հետ համագործակցությամբ եւ հերառի արժանապատիվ աշխատանքային պայմանների եւ կառավարելի դասավանդման ծանրաբեռնվածության, ինչպես նաեւ պաշտոնավարման գրավիչ հնարավորությունների շրջանակ.

բարձրագույն ուսումնական հաստատությունների (որոնք ակնկալվում է, որ հերառում են դասավանդման համար պատասխանատու բոլոր անձանց) հետ համագործակցությամբ ապահովել կառուցվածքային միջոցառումներ՝ դասավանդման եւ հետազոտության նկատմամբ հարգանքի հավասարությունն ապահովելու համար: Անհրաժեշտության դեպքում ակադեմիական կարիերայի սխեմաները պետք է վերանայվեն՝ ակադեմիական կարիերայում դասավանդման ավելի լավ ճանաչում ապահովելու համար.

բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցությամբ ուսումնասիրել դասավանդման նոր եւ նորարարական մեթոդները խթանելու ուղիները՝ շեշտը դնելով, ի թիվս այլ նորարարական մոտեցումների, միջոլորտային եւ բազմաոլորտային մոտեցումների վրա, հետազոտության վրա հիմնված ուսումնառության եւ դասավանդման, ուսումնառության վերլուծության եւ բաց կրթության պատշաճ օգտագործման վրա:

3. Ամրապնդել բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ համակարգերի՝ ուսումնառությունը եւ դասավանդումը բարելավելու կարողությունները հետեւյալի միջոցով.

հերառել ուսումնառության եւ դասավանդման բարելավումը բարձրագույն կրթության ազգային ռազմավարություններում եւ մոտեցումներում: Այդպիսի ռազմավարությունների եւ մոտեցումների մշակումն ու իրականացումը պետք է հիմք ծառայեն բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ ուսումնառող ու դասավանդող համայնքի այլ շահագրգիռ կողմերի հետ կառուցվածքային եւ շարունակական երկխոսության համար.

աջակցել ուսումնառության եւ դասավանդման ռազմավարական զարգացմանն ու նորարարական կարողություններին ինչպես ազգային, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակներում՝ էմպիրիկ կրթական հետազոտությունների, ծրագրերի եւ փորձնական ծրագրերի, ինչպես նաեւ կրթության վերաբերյալ տվյալների հավաքագրման եւ օգտագործման միջոցով՝ հարգելով տվյալների գաղտնիությունը.

ուսումնասիրել ազգային մակարդակով եւ ամբողջ ԵԲԿՏ-ում լավագույն գործելակերպերի միջսահմանային փոխանակումը խթանելու եւ դրան աջակցելու ուղիները, օրինակ՝ փոխանակման եւ համագործակցության հարթակներով.

հատկացնել համապատասխան եւ կայուն ֆինանսավորում ու ռեսուրսներ եւ անհրաժեշտության դեպքում ընդու նել նպատակին համապատասխան կարգավորող շրջանակներ՝ բարձրագույն ուսումնական հաստատություններին նորարարական եւ բարձրորակ դասավանդման եւ ուսումնառության միջավայրեր զարգացնելու հնարավորություն ընձեռելու նպատակով:

Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբին խնդրել են իր հաջորդ աշխատանքային ծրագրում աջակցել ուսումնառության եւ դասավանդման վերաբերյալ առաջարկությունների իրականացմանը՝ նպատակ ունենալով ԵԲԿՏ-ում ձեռք բերել համատեղ առաջընթաց եւ արդյունքների վերաբերյալ զեկույց ներկայացնել Բոլոնիայի գործընթացի իրականացման վերաբերյալ 2024 թվականի զեկույցի շրջանակներում:

Co-funded by
the European Union

This translation is co-funded by the European Union. Views and opinions expressed are however those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union or the European Education and Culture Executive Agency (EACEA). Neither the European Union nor EACEA can be held responsible for them.

EUROPEAN
Higher Education Area

bologna
process

ITALIAN BFUG SECRETARIAT
2018-2020